

աթու - 320-4-1



ԱՌԱՌՈՏ

ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

◆ Խմբագիր ◆
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

◆ Տէր ԷԼՏԵՐԿԵՆ ◆
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ = ԹԻԻ 4

15 ՅՈՒՆՎ. 1910



ԳԻՆ 100 ՓՐ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԽԱՏԻՍԵԱՆ

Վարչապետ՝ Հայ Հանրապետութեան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



**ՊՈԼԻՍ
ԵՒ ԳԱԻԱՌ**


Տարեկան (24 քիւ) 60 Դան.

Վեցամսեայ (12 ») 30 »

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան (24 ») 10 Գրանի

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ, — Առաւօտի հասցէն է՝ Պապը Ալի ճառոտէսի,
թիւ 43, Բ. Դրան ճիշդ դիմացը:



ՀՐԱԻՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԵՒ ՏՆՕՐԷՆՆԵՐՈՒՆ

«Առաւօտ» հանդէսին խմբագրութիւնը ջանապէս կը հրաւիրէ բոլոր վարժա-
րաններուն տնօրէններն, ուսուցչուհիները և ուսուցիչները, որ հաճին իրենց աշ-
խատակցութեամբ, թելադրութիւններով օգնել իրեն: Սիրով պիտի հրատարակենք վար-
ժարաններու դպրոցական հանդէսներու, յառաջագէտ ուսանողներու մասին հակիրճ
տեղեկութիւններ, դպրոցական լուրեր և այլն:

«Առաւօտ» հանդէսին խմբագրութիւնը ամէն ջանք պիտի թափէ օրէ օր աւելի
գոհացուցիչ ու հետաքրքրական ընելու համար այս թերթը, որ կարեւոր պակաս մը
բացնելու կոչուած է մեր համեստ գրականութեան մէջ:

ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԵՐ

«ՀԱՅ ԿԻՆ», կիսամսեայ պատկերազարդ հան-
դէս: Տէր եւ Տնօրէնուհի՝ Հայկանոյշ Մառք,
տարեկան բաժնեգին 300 դրկ.: Հասցէ. — Կ. Պոլիս,
Բերա, Օսմ. նամակատուն, փոսթարկղ թիւ 192:

«ՈՍՏԱՆ» կիսամսեայ պարբերագիր Արուեստ-
ներու եւ Գրականութեանց. խմբագիր Մ. Շամ-
տանճեան. տարեկան բաժնեգին 500 դր2: Հասցէ՝
Բերա, Գապրիսիան փողոց թիւ 37:

«ԱՐԱԳԱԾ» շաբաթաթերթ. օրկան ազգայնա-
կան ազաական կուսակցութեան: Պատասխանա-
տու Տնօրէն Յ. Դարբինեան. տարեկան բաժ-
նեգին՝ 150 դահեկան: Հասցէ՝ Բերա Ալիոն փողոց
թիւ 1 կամ 7:

«ՆՈՐ ԴԱՐ» գրական հանդէս ծաղրանկար-
ներով. Տէր եւ Տնօրէն Ա. Յ. Սվանեան. Տարեկան
բաժնեգին 220 դահկ.: Հասցէ՝ փոսթարկղ 575:

«ԿԱՎՐՕՇ» զաւեշտական շաբաթաթերթ
Գին 5 դր2 հասցէ՝ Բերա, Օհանեան տպար.:

ԵՒՐՈՊԱՅԷՆ ՆՈՐ ՀԱՍԱՆ

ՀԱՅԿ. ԵՌԱԳՈՅՆ ԺԱՊԱԻԷՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՔՕՔԱՐՏՆԵՐ ԵՒ ՌՕՁԷԹՆԵՐ

Բոլոր միութիւններու եւ հանդէսներու կազմա-
կերպիչները կը հրաւիրուին տեսնել այս աշխատի
փնտռուած նորութիւնները, Դիմել մեծ շուկայ,
Տիար Զարեհ Բլատեանի, Բօլանճըլար,

ԾՆՈՂՔ ՄԻ ՔԱՇԵԼ ՏԱՐ

Ծնողքնե՛ր պէտք չէ քաշել տաք ձեր փոք-
րիկներուն ակռաները, այդ կերպով կզակի ձեւա-
փոխութիւն յառաջ կուգայ. Դիմեցէք Ատամնաբոյժ
ՏՈՒԹ. ԱՂԵՔՍԱՆԴՐ ԷՔՄԷՔՃԵԱՆԻ

որ արտասահմանի մէջ խրկար ժամանակ, մաս-
նաւորապէս զբաղած է նաեւ տղոց կաթի ակռա-
ներու դարմանումի ուսումնասիրութեամբ և աշ-
տով մասնագիտութիւն ձեռք բերած:

Հասցէ՝ Պոլիս, Էմին Էօնիւ, Եէնի ճամիի
սանդուխներուն դէմ: Թիւ 61:

ԿԵՐՐՈՆԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ

Թէլէֆօն 890

ՎԱՀՐԱՄ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կեսիկ-Փաշա Պալի Փաշա Եօֆուշու


Եւրոպայէն ամէնաթարմ դեղեր հասած են.
դեղագիրները կը պատրաստուին ամէնայն խրդ-
մտութեամբ եւ դիւրամատչելի գիններով. տարազ-
բելոց մասնաւոր զեղջ. Բորոտութեան միակ դար-
մանը, իմ գիւտս եղող ՍԱՎՕՆ ԱՆԹԻԿԱԼԷՆ է որ
վաւերացուած եւ յանձարարուած է Առողջ. Տը-
նօրէնութեան կողմէ: Բորոտութենէ չվարակուելու
համար ԱՆԹԻԿԱԼԷՆ թնառ ով լուացուիլ անհաժեշտ է:



ՆՈՐԱՀԱՍՆԵՐՈՒ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆՐԱՍ

Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Խմբագիր
ԳՐ. Հ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ



Տէր ԷԼ ՏՏՈՐԷՆ
Մ. ՍՈՒՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ — ԹԻԻ 4

15 ՅՍԻՆՎ. 1920

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐ

Դեռաւոր ընթերցողներս,

Այս առթիւ տօնական օրերու մասին պիտի խօսիմ ձեզի: Հարկաւ լսած ըլլալու էք թէ Հին ու Նոր Տոմարներ կան, ինչպէս նաեւ տաճարներ, օրուան տարբերութիւն մը երկուքին միջեւ: Արեւելքի մէջ Հայերը, Յոյները, ինչպէս նաեւ Ռուսերը կը շարունակեն հեռելի Հին Տոմարին, որովհետեւ եկեղեցական տօնակարգութիւններ Հին Տոմարի վրայ յարմարցուած են. թէեւ տարակոյս չիկայ թէ Նոր Տոմարը, այսինքն Եւրոպականը աւելի ճիշդ է ու գիտական:

Հետեւաբար Եւրոպականէն տաճարներէք օր ետքը կու գայ մեր Կաղանդը ու անկէ վեց օր ետքն ալ Ս. Ծնունդի տօնը: Ծնունդէն առաջ ալ Հայ Եկեղեցիի Տօնացոյցին համեմատ կու գան կարգ մը աւագ տօներ առաքելներու, հայրապետներու և ուրիշ սուրբերու յիշատակին նուիրուած: Ահա այս պատճառաւ այս ծրերուն կը հանդիպին շատ մը անունի տօներ, զորոնք ընտանեկան խրախճանութիւններով տօնել սովորութիւն եղած է Հայոցս մէջ: Հոս իբրեւ միջանկեալ անդեկութիւն կրնանք աւելցնել թէ ինչպէս որ Եւրոպացիներու մէջ սովորութիւն է ծննդեան և ամուսնութեան տարեդարձներ տօնել, այնպէս ալ մեր մէջ սովորութիւն եղած է անուան տօնախմբութիւնը կատարել՝ ընտանեկան ուրախութիւններ և հանդէսներ սարքելով:

Թերեւս փորձուիք, ո՛վ իմ դեռաւոր ընթերցողներս, հարցնել թէ ինչո՞ւ եղած են այս տօներն ու տօնական օրերը:

Ատոր պատասխանը դուք իսկ կրնաք գտնել քիչ մը խորհելով : Նախ չէ՞ որ այս տօները հաստատուած են յիշատակելու համար մեծ դէպքեր և դէմքեր : Ու ասով իսկ հողեւորապէս ու բարոյապէս մեծ օգտակարութիւն ունին մեզի համար : Տօները, ինչպէս գիտէք, միշտ կրօնական չեն . կան նաեւ ազգային և ընտանեկան տօներ, որոնք ուրիշ տեսակ խանդավառութիւններ կը ծնցնեն մեր սիրտերուն մէջ : Եւրոպական երկիրներու և քաղաքակիրթ ազգերու մէջ ի՞նչ խանդավառութեամբ և հանդէսներով կը տօնուին այս ազգային տօները : Ուրեմն, կը տեսնէք թէ տօներուն կրօնական, բարոյական և ազգային նշանակութիւններն ու օգուտները մեծ են :

Տօներն ու տօնական օրերը կողքան նաեւ բացառիկ եռանդ ու պէսպիսութիւն մը բերել մեր սովորական կեանքի միօրինակութեան : Ինչպէս որ մեր ամենօրեայ սովորական զգեստները մեր ուշադրութիւնը չեն գրավեր, բայց մեր տօնական զգեստներն ու մասնաւոր համազգեստները մեր և ուրիշներուն ուշադրութիւնը կը հրաւիրեն իրենց վրայ, այնպէս ալ տօներն ու տօնական օրերը հողեկան մասնաւոր արամադրութիւն մը կը ստեղծեն մեր մէջ :

Սիրելի փոքրիկներ, այս տարի ո՛րչափ ուրախ եղաք անունի տօներուն առթիւ թէ՛ ձեր թէ՛ բարեկամներու ընտանիքներու մէջ՝ մասնակցելով ընտանեկան հանդէսներու : Ո՛րչափ ուրախ եղաք նաեւ Կաղանդի Տօնին, մասնակցելով Կաղանդի նահապետական սեղանին, ստանալով ձեր այլազան նուէրները և խաղալով, խնդալով բոլոր օրը՝ մասնակցելով Կաղանդի ուրախութիւններուն, — ինչպէս դպրոցական, եկեղեցական և ընտանեկան հանդէսներ, և այլն :

Իսկ Հայկական Կաղանդէն վեց օր ետքը եկաւ Ս. Ծնունդի տօնը, զոր իրաւաւք կրնանք կոչել Մանկութեան Տօնը : Որովհետեւ Յիսուս, աստուածային Ս. Մանուկը ծնաւ, նոր յարգ ու կարեւորութիւն ընծայելու համար՝ կարծես՝ մանկութեան, որ անտեսուած վիճակ մը ունէր հին դարերուն : Դուք շատ աղէկ գիտէք Յիսուս-Մանուկին ծննդեան պատմութիւնը, զոր շատ անգամներ լսած էք տունը՝ մայրիկէն՝ և դպրոցը՝ կրօնքի ուսուցիչէն : Ահա այդ Մանուկ-Յիսուսն էր որ մեծցաւ, բարիքներ բրաւ, վսեմ վարդապետութիւններ քարոզեց և օրինակելի ու սուրբ կեանք մը ապրեցաւ : Ան էր որ մանուկները օրհնեց, զանոնք իրեն քով կանչեց և անոնց կարեւորութիւնն ու արժէքը սորվեցուց մարդկութեան : Ուրեմն շատ վայելուչ և նուիրական չէ՞ մեզի համար այս երկնաւոր Մանուկին ծնունդին յիշատակը տօնել ամէն տարի :

Եւ երբ կը յիշեմ իմ ալ մանկութեանս օրերուն տօները, մասնաւորապէս Կաղանդն ու Ծնունդը, սիրտիս մէջ կ'արթնան մանկական քաղցր յիշատակներ, որոնք մանկութեան օրերուն, երազի օրերուն հետ անցան դացին, ու ա՛լ ետ չեն դառնար . . . :

Սիրելի փոքրիկներ, այո՛, ուրախ եղաք այս տօնական օրերուն . այդ ձեր տարիքին արդար իրաւունքն է : Ա՛խ, երջանիկ մանկութիւն, նախաճաշակ երկնային կեանքի, ի՞նչ քաղցր էիր դուն . . . :

ՀԱՅՐԵՆԻ ԵՐԳԵՐ

ԿԱՂՐՆՏԷՍ

I

Կաղրնեստ(1) է, մեր կաղրնեստ.
Համասարած ձիւնն իր ներմակ
Ծածկոյթով՝ գերդ կակուղ վերմակ՝
Քաղաքն ամբողջ ծածկեր է, տե՛ս:
Օնախէն վեր, բուխերիկէն(2)
Ծոյլ ծուխն իր գործ փուլաներով
Կը բարձրանայ՝ երբ չկայ հով,
Կեանքի՛ նրշան ծուխն ապաքէն:
Բուխերիկէն հարթ սանիքին՝
Տոպրակ, շողգամ(3) կախեցե՛ք վար
Տըղա՛ք, հրհուրի թող ձեր հոգին
Նըւերներով սիրայօժար.
Կաղրնեստ է, մեր կաղրնեստ,
Մանկական տօ՛ն մեծահանդէս:

II

Կաղրնեստ է, մեր կաղրնեստ,
Հոս հայրենի երդիքին տակ,
Ուր սիրտեր միշտ սիրով են տակ,
Վայելիքներ կան, հանոյք պէտքէս:
Օ՛ն, բոլորուի՛նք ուրախ սիրով
Կաղանդի նոխ սեղանին շուրջ,
Պահ մը չըլլանք այնչափ շատ լուրջ,
Խօսինք խնդանք շէն. անվրդով:
Օրհնութիւնն, ա՛խ, հայրենի տան,
Բարիքներն իր բազմատեսակ
Թող անպակաս յաւէտ մընան
Ու վայելեն ամեն հասակ:
Կաղրնեստ է, մեր կաղրնեստ,
Թող չի մընայ ո՛չ ոք անեստ:

III

Կաղրնեստ է, ա՛նք կաղրնեստ,
Այսօր երբ հայ օնախներուն

Մեզն է մարեր կայծը ջեռուն,
Կեանքն է սառեր մեռելի պէս,
Ա՛խ, թող չորհան այն վատ ձեռներ,
Որ փանդեցին տունը Հայուն,
Ու ծակեցին սիրտն ըզգայուն,
Որ միշտ յոյսով կը բաբախէր:
Ա՛խ, հայրենիք մ'ամբողջ մոխիր,
Ա՛խ, Յեղ մ'ողջոյն արիւնլուսի,
Մե՛կ տարիներ համա՛նք ոնիր,
Աննախընթաց մեծ Գողգոթայ.
Կաղրնեստն այս ա՛նք կաղրնեստ,
Ազգային մեծ սրգահանդէս:

IV

Կաղրնեստ է, Հայ կաղրնեստ.
Ահա ծագեց մեծ Արշալոյս,
Հայ Ամանորն համակ կեանք, յոյս.
Ա՛յ խոստմնայից կը ժպտի մեզ:
Հայորդիներ վրտարանդի,
Հայ աղջիկներ, կոյսեր շուշան,
Ուխտի կ'երթան նոր Շաւարշան
Դեպ բսորոտն Արարատի:
Անցան այլեւս բուքն ու բորան
Հայաշխարհին սեպ սարերէն,
Հողն հայրենի —նոր,սուրբ խորան—
Օ՛ն, համբուրենք անկուշտօրէն:
Կաղրնեստ է, Հայ կաղրնեստ.
Ազատ Հայուն փառքի հանդէս:

ԿԻԼԻԿԵՅԻ

ԱՆՁՐԵՒ - ԱՐԵՒ

Ու կ'իջնէ վար առատ անձրեւ,
Զրեւու ծարաւ մեր ծաղիկներ,
Յետոյ շողայ պայծառ արեւ՝
Կը զուարթացնէ աշխարհը մեր:

Երբ շարունակ տեղար անձրեւ՝
Ծաղիկները կը խեղդուէին,
Իսկ երբոր միշտ շողաք արեւ՝
Ծաղիկ չէր մնար ամենեւին:

ԱՆԳԼ. Է

(1) Կաղանդ՝ Կիլիկեան բարբառով

(2) Ծխան

(3) Վրան մեթալիք եւ ուրիշ զրամներ
խօթելու համար



«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ,,

Հըրեշտակներ երկինքէն ,
«Փառք իւրարձուես» երգ կ'երգեն ,
Դաշնակութեամբ հոգեգրաւ ,
Ու կ'աւետեն թէ իրաւ

«Քրիստոս ծնաւ :»

Հովիւներն ալ հիացիկ
Կուգան քարայր մ'ուր փոքրիկ

Մանկիկ մը կայ նորածին ,
Կ'ըսեն՝ ապշած եղածին՝
«Քրիստոս ծնաւ :»

Տարաշխարհիկ մոգեր ալ
Համոզումով մ'անայլայլ ,
Կուգան Աստուիկն ետեւէն ,
Կը հաւատան ու կ'ըսեն ,
«Քրիստոս ծնաւ :»

Թշնամիներն իսկ Անոր

Չեն ուրանար դէպքը նոր ,

Հերոգդէսներ իսկ գիտեն՝

Աշխարհ գալով երկինքէն՝

«Քրիստոս ծնաւ :»

Բոլոր աշխարհ ցնծագին

Երգէ երգեր իր փառքին ,

Աւետելով մարդկութեան

Կուրն այս բարի , փրկածայն —

«Քրիստոս ծնաւ :»

Դուք ալ տըղաք , աղջիկներ ,

Ծնունդի երգով խնդարեր՝

Երգեցէք նոր «Աւետիս»

Թէ մեծ Յոյսը աշխարհիս՝

«Քրիստոս ծնաւ :»

Գ.Ր. Հ. Գ.



ՄԱՂԹԱՆՔ

Ահա՛ եկաւ Կաղանդ բարի ,

Այս օրն հասնինք ամէն տարի ,

Ինչ հաճելի տօն մ'է Կաղանդ ,

Ճոխ նըւէրներն իր՝ մանաւանդ :

Եկէ՛ք նստինք սեղանին շուրջ ,

Արդեօք կատա՞կ է այս թէ լուրջ .

Այս՝ ո՞րչափ միրդ , անուշ , շաքար

Աշխարհիս վերջն այսօ՞ր կուգար :

Թո՛ղ միշտ այսպէս առատ սեղան ,

Որուն վըրայ բարիք տեղան ,

Յրհնութիւնը ըլլայ մեր տան ,

Ուր ամէն ոք խաղան , խնդան :

Նըւէրներուն պէս Կաղանդի՝

Թող երկինքէն բարիք թափի

Բոլոր տարին մեզ ամէնուս ,

Ըլանք ուրախ եւ լիայոյս :

Բարի Կաղանդն ահա՛ եկաւ ,

Ձըւարթ ըլլալ պէտք է հարկաւ :

Բայց չի մոռնանք որքն ու աղքատ ,

Աստուած ալ մեզ կուտայ շատ , շատ :

Գ.Ր. Հ. Գ.



ՆՈՐ ՏԱՐԻՆ

Տըղաքնե՛ր ահա

Նոր Տարին կուգայ .

Տեսէք , աղջիկներ՝ ,

Ամանորն է ձեր ,

Կուգայ պատկառոտ

Մեր ամէնուն մօտ :

Մ'ն , մենք այս տարի

Ըլանք միշտ բարի ,

Ապրելով ուրախ՝

Աշխատինք խաղաղ .

Ըլանք ջանասէր ,

Երբե՛ք անտարբեր :

Յուցընենք աշխոյժ ,

Գործածենք մեր ոյժ .

Նոր Տարին պայծառ՝

Գանձ մ'է մեզ համար ,

Ձոր մեր Հայրն Աստուած ,

Մեզ փոխ է տըւած :

(Հետեւողաբար)

Գ.Ր. Հ. Գ.



ՀԱՅ ՏՂՈՒՆ ԿԱՂԱՆԴՔԷՐ

Հայ տըղայ մ'եմ ես ազգասէր ,

Փա՛ռք , որ այս մեծ օրուան հասեր՝

Մեծ յոյսերով սիրտս է զեղուն՝

Ապագային համար Հայուն :

Թող ուրիշներ խայտան , խնդան .

Ու իրարու նըւէրներ տան ,

Ես այդպիսի չունիմ փափաք ,

Կարօտ մ'ունիմ , տենչ մը անյաղ :

Ան սէրն է իմ հայրենիքիս ,

Անով լեցուած՝ համակ հողիս ,

Արժէք չունի աշխարհ ինձ տան ,

Իմ Կաղանդչէքս է Հայաստան :

Գ.Ր. Հ. Գ.



ՔԻՏԱԿԱՆ

ԱՅԽԱՐՀԻ ՕՐՕՐՈՅԸ ԿԱՄ ԶՈՒՆ

Դ.

Նախահիւթը դեղնուցին մէջ. — Բաժանու-
մը. — Կեանքը կ'արթննայ. — Անեցուն
խորշը. — Դէպի կենդանական բաղադրեալ
կեանք:

Կը յիշենք թէ հաւկիթին դեղ-
նուցը նախահիւթէ, իւղէ և ուրիշ
նիւթերէ կը բաղկանայ: Նախահիւ-
թը կրնայ դեղնուցին մէջ միօրինակ
կերպով խառնուած ըլլալ, կամ կեն-
դանիններէ ոմանց հաւկիթներուն մէջ
եղածին պէս՝ նախահիւթը կրնայ
հաւաքուած ըլլալ դեղնուցին մէկ
մասին մէջ և դեղնուցին մնացեալ
մասը կրնայ բաղկանալ իւղէ և ու-
րիշ նիւթերէ: Երբ հաւկիթ մը ար-
դասաւորուի՝ անոր նախահիւթը
կարծես կ'արթննայ յանկարծ՝ յիշե-
լով թէ ինք ողջ է ու ընելիք գործ
ունի: Փափաք մը կ'արթննայ անոր
մէջ կարմրախայտ մը, գորտ մը,
կամ կարմրալանջ մը ըլլալու, կամ
ըլլալու այն արարածը որ իր ծնողն
էր: Բայց ինչ կրնայ ընել: Ինքը
պարզ դոնդողակերպ բիծ մըն է,
ապրող կէտ մը՝ աւելի բաղադրեալ
ըլլալու ընդունակութեամբ օժտը-
լած: Այսպէս, ան պարզ գործ մը
կը կատարէ: պարզ արարածի մը
յարմար. — ան միաբջիջին կը հետեւի
և երկու մասերու կը բաժնուի անոր
պէս: Այս բաժանումը զայն հաւա-
սարապէս պարզ երկու արարածնե-
րու չի վերածեր. ան նորէն կը շա-
րունակէ մնալ մէկ արարած, բայց
նուազ պարզ: Ան առած է կեանքի
փոփոխութեան առաջին քայլը, որ
հաւկիթ մը կը փոխակերպէ կենդա-
նի մը:

Այս երկու մասերու բաժնուելու
գործողութիւնը անձեւ նիւթէն բա-
ղադրեալ կեանքի անցնելու յաղ-
թական մէկ գործողութիւն է: Եր-
կու մասէ բաղկացած արարած մը

մէկ մասէ բաղկացած արարածէ մը
կրկնապէս բաղադրեալ չէ: Ուր որ
նախահիւթը միօրինակ կերպով
խառնուած է դեղնուցին՝ բաժանման
բույլին բոլոր դեղնուցը երկու մա-
սերու կը բաժնուի: Նախահիւթը
լսած է ձայն մը, որու հնազանդե-
լու է. իւղը և ուրիշ նիւթերը ա-
նանկ մը խառնուած են անոր հետ
որ դիւրաւ չկրնար բաժնուիլ անոնց-
մէ և իր բաժանման վայրկեանին ա-
մէն ինչ իրեն հետ կը տանի և այս-
պէս ամբողջական դեղնուցը կը բաժ-
նուի երկու դեղնուցներու: Նախա-
հիւթը կը հաւաքուի մէկ մասին մէջ
և դեղնուցին մէկ մասը կը մնայ
անփոփոխ. և այս անփոփոխ մասը
իրբւ սնունդ կը ծառայէ երբ կեն-
դանին կը մեծնայ աստիճանաբար:

Նախահիւթի բաժանումով յառաջ
եկած երկու մասերը ունին կլոր ան-
կիւններ. անոնք երկու կատարեալ
խորշեր եղած են հիմակ: Եւ այս
գործօն խորշերուն մէջ ունինք ինչ
որ կարեւոր է աշխարհիս ամէնէն
բաղադրեալ կենդանին չինելու հա-
մար, որովհետեւ մարդս իսկ չինուած
է նախահիւթի խորշերէ: Իւրաքան-
չիւր խորշ խորհրդաւորապէս տպա-
ւորուած է ան դադափարականով,
որուն պիտի ձգտի: Ապագայ կեն-
դանին անոր մէջն է դեռ չկազմուած
ձեւով, ձեւազուրկ՝ բայց որոշ ձեւ
մը առնելու ստիպուած կենդանա-
կան կարելի ամէն ձեւերէն աւելի
մէկ ձեւ, — իր ծնողքին ձեւը: Ա-
նոր խորշերը կը նախատեսեն այդ
որոշ ձեւը, և անոնցմէ ամէնէն փոք-
րիկն իսկ անանկ մը կը տրամադրէ
ինքզինքը որ այդ որոշ ձեւին յան-
գի: Այս կ'ընեն հստակեցնով օրէն-
քի մը որ մոլորակները իրենց ծիրե-
րուն մէջ բռնող օրէնքին չափ խոր-
հրդաւոր է: Այս արթնցած խորշը
սնունդով և յարմար շրջավայրով կը
մեծնայ և կը շինէ ուրիշ խորշեր,
մինչեւ որ հաւկիթը կատարելագոր-
ծէ իր կարելիութիւնները և ըլլայ
ապրող էակ մը:

ՄԱՐԿԵԹ ՌՈՐԵՆԸ ՄՈՐԼԻ

ԱՌԱՋԻՆ ԾՆՈՒՆԴԻ - ԾԱՌԸ

Գիտէ՞ք թէ ի՞նչ կը նշանակէ «Ծնունդի - ծառը, սիրելի փոքրիկներ»:

Թերեւս ձեզմէ ոմանք, հոս Պոլսոյ մէջ, կամ Եւրոպայի և Ամերիկայի մէջ, լսած էք այս մասին, կամ տեսած իսկ էք ծնունդի ծառեր: Բայց գաւառներու մէջ կան շատեր, որ այս մասին շատ բան մը չեն գիտեր: Ու այս շատ բնական է, որովհետեւ «Ծնունդի-ծառ»ը հայկական ոչինչ ունի իր մէջ. անիկա եւրոպական սովորութիւն մըն է: Մեր մէջ իրարու նուէրներ տալու օրը կազանդն է, իսկ Եւրոպացիներու մէջ ալ՝ Ծնունդի տօնը:

Տուններու մէջ պատրաստուած Ծնունդի Ծառը, եւրոպական սովորութեան համեմատ եղեւինի կամ շոճիի խոշորկեկ ճիւղ մըն է, որ հաստատուած է պատուանդանի մը վրայ. վրան գոյնզգոյն թուղթէ և ուրիշ զարդեր զետեղուած են և շատ մը մոմիկներ տնկուած: Ահա այս ծառին վրայ կը կախուին ընտանիքի անդամներէ կամ բարեկամներէ զրկուած նուէրներ, զորոնք վառ կ'առնեն ու կը բանան Ծնունդին Խթման իրիկունը ընտանեկան խրախճանութիւններով ու այդ կերպով հաճելի ժամանց մը կը սարքեն ընտանիքին պզտիկներուն ու մեծերուն:

Սիրելի փոքրիկներ, այս մասին ձեզի պիտի պատմեմ պատմութիւն մը, որ իրական է՝ թէ ոչ, չեմ գիտեր: Բայց վստահ եմ թէ գեղեցիկ պատմութիւն մըն է և մեզ կը սորվեցնէ բարի ըլլալ ամէն անոնց, որ կարօտ են ու թշուառ:

Շատ առաջները, անդրծովեան երկրի մը մէջ — Գերմանիա կոչուած երկրին մէջ — կը բնակէր փայտահար մը: Անոր տունը ծառի կոճղերէ շինուած հիւղակ մըն էր, անտառին մօտիկը: Հոս կը բնակէին ինք, իր կինը և երկու զաւակներ, Հէնրի և Մէյ:

Խթման իրիկուն մը տղաքը նրստած էին իրենց ծնողներուն հետ, տաքուկ օճախին դիմաց: Նստած կը խօսէին ուրախ դուարթ: Դուրսը հովը կը փչէր զայրադին և ձիւնը թանձր ծածկած էր գետինը:

«Գիտե՞ս, Հէնրի, ինչո՞ւ Ծնունդ կ'ըսենք այսօրուան», հարցուց հայրը:

«Անոր համար որ Յիսուս այսօր ծնաւ», պատասխանեց տղան:

Ճիշդ այն պահուն թեթեւ բախումի ձայն մը լսեցին պատուհանին քով և մանկական ձայն մը որ կ'ըսէր. «Խնդրեմ զիս ներս ընդունենեցէք. ես տուն տեղ չունիմ, շատ կը մտիմ. անթութեանէ պիտի մեռնիմ՝ եթէ զիս ներս չընդունիք»:

Տղաքը դուռը վազեցին, բացին և ըսին. «Ներս մտի՛ր, խեղճ մանուկ»:

Դողդէացող պզտիկ օտարականը ներս մտաւ. տղաքը անոր սառած ոտքերն ու ձեռքերը տաքցուցին. իրենց ընթրիքէն, որ թուխ և չոր հաց էր, բաժին հանեցին անոր: Յետոյ խեղճ մանուկը իրենց անկողինին մէջ պառկեցուցին, և իրենք կրակին դիմաց տախտակէ նստարանին վրայ պառկեցան:

Արշալոյսին Հէնրի և Մէյ քաղցր երաժշտութեան ձայնէ մը արթնացան: Երբ պատուհանին առջեւ գացին տեսնելու համար թէ ո՞վ կը

նուազէր այդպէս քաղցրաձայն, տե-
սան խուժք մը սպիտակազգեստ
տղաքներ՝ ձեռքերնին ոսկեղէն տա-
ւիղներ բռնած:

Կրնաք երեւակայել թէ ո՛րչափ
զարմացան և այս տղաքները հրեշ-
տակներ կարծեցին: Բայց իրենց զար-
մանքը ա՛լ աւելի շատ եղաւ՝ երբ
տեսան իրենց փոքրիկ օտարական
հիւրը, ան ալ սպիտակազգեստ և
գլուխը՝ ոսկիէ թագ մը դրած կը
կենար խուժքին առջեւ:

«Սիրելի տղաքներ», ըսաւ ան,
«ես ձեր տունը եկայ և ըսի թէ
տուն տեղ չունիմ, մտած եմ և ա-
նօթի: Դուք զիս՝ ներս ընդունեցիք,
կերակրեցիք, ձեր անկողինին մէջ
պառկեցուցիք: Ուստի հիմա ես ե-
կայ ձեզ շնորհակալութիւն յայտնե-
լու և օրհնելու՝ փոխարէն այն սի-
րոյն զոր ցուցուցիք ինծի:»

Տունին մօտը կ'աճէր եղեւին
մը: Կը պատմուի թէ ոսկիէ թագ
դրած մանուկը անկէ ճիւղ մը կոտ-
րեց և դետին տնկեց ըսելով. «Այս
ճիւղը պիտի աճի ու ծառ պիտի ըլ-
լայ և ամէն տարի այս ատեն ան
պիտի ծանրաբեռնուի աղուոր բա-
ներով՝ ձեզ նման բարի սիրտեր ու-
նեցող մանուկներու համար:

Ահա այս է առաջին Ծնունդի -
Ծառին պատմութիւնը: Ամէն տարի
Ծնունդի առթիւ պիտի չուզէի՞ք
յիշել այս սիրուն պատմութիւնը:

Անգլ. Է.

ԳՐԻՉ-ՔՆԱՐ

Յետագայ գեղեցիկ ոսանաւորը ար-
սասանուած է Կաղանդի օրը՝ Պալաթի
խորէնեան վարժարանին մէջ.

Կ Ա Ղ Ա Ն Դ

Սիրելի սաներուս եւ սանուհիներուս

Կաղա՛նդ է այսօր, սիրասուն տըղաք,
Օ՛րն է ցնծութեան, խինդի՛, խայտանքի՛,
Պէտք է դադար տաք պահ մ'աշխատանքի,
Յետկէ՛ք ու պարէք, խնդա՛ք ու խաղաք՝

Կաղա՛նդ է այսօր, զըւարթ Ամանոր,
Պէտք է ձեր հոգին հրճուանքով ցնծայ,
Զեր սիրտն իրարու դուք ըրէք ընծայ,
Որպէսզի պանծաք յոյսով նորանոր:

Կաղա՛նդ է այսօր, բայց ոչ այն կաղանդ,
Սեւ տարիներու դժնէ, անօրէն,
Ուր կը յօշոտուէր Հայն անգըթօրէն,
Ռճրագործներո՛ւ կողմէ նորաղանդ:

Կաղա՛նդ է այսօր, Տօն երջանկաբեր,
Պե՛րճ երազներու լուսազեղ կըռուան,
Նախօրեա՛կն անոյշ ԶԱՅՆԻ ՄԵԾ ՕՐՈՒԱՆ,
Որուն կը սպասեն Հայերն անհամբեր....

Կաղա՛նդ է այսօր, անցեալն ա՛լ մոռնանք,
Գգուենք սխրանքով մեր սուրբ իտէալ,
Անցեալն մեզ համար մղձաւանջ մ'է ալ,
Փակենք ա՛լ մենք այդ էջն արիւնեւանգ:

Կաղա՛նդ է այսօր, բայց վաղը նորէն,
Պէ՛տք է նըւիրուինք մենք աշխատանքի,
Աշխատութիւնն է Մեծ Օրէնք կեանքի,
Որուն հետեւի՛լ պէտք է կուրօրէն:

Կաղա՛նդ է այսօր, բայց չե՛նք երջանիկ,
Զի օտար ափերն են մեզ ապաստան,
Պէ՛տք է որ թռչինք դէպի ՀԱՅԱՍՏԱՆ՝
Մեր բիւր դարերու անո՛յշ Հայրենիք....

ԳԷՈՐԳ ՍԻՄՔԷՇԵԱՆ



ՅԵՂԻՍ ՈՐԲՈՒԿՆԵՐՈՒՆ

Եկէ՛ք ինծի, ո՛վ հէք թշուառներ,
եկէ՛ք որ ամոքեմ ու թեթեցնեմ ձեր
ծով տառապանքները:

Դուք, իմ դժբախտ ցեղիս տուայ-
տած զաւակներ, դո՛ւք էիք որ քա-
լեցեք չարչարանքի ահաւոր գողգո-
թանքէն և զգացիք դառնութիւնը
կեանքին. զգացիք մանաւանդ այն
ատեն, երբ ձեր ծնողքներն ալ քա-
լեցին Զօրի մահաբոյր ու անջրդի
անապատներէն:

Դողդղացիք երբ տեսաք անգութ
հրէշներ, որոնք ձեզ կը խլէին ձեր
սիրասուն ծնողաց գրկերէն քրքիչով
մը վարձատրելով անոնց ողորմելի
վայնասունները:

Այ՛ո, ո՛վ պաշտելի անմեղ հոգի-
ներ, դո՛ւք, արիւնի սարսափը ձեր
աչքերուն մէջ և վրէժը որտերնուդ
խորը պինդ սեղմած, ամբողջ տարի-
ներ թուրք դահիճներու անարգ չա-
րիքներուն ներքեւ տառապեցաք,
բայց հոն՝ միշտ ձեր սիրտերը ազա-
տութեան և յոյսի մեղեդին կ'երգէին:

Հեռուն, շատ հեռուն, այն մա-
հաբոյր ձորերուն և ծմակներուն մէջ
չարաչար ու եղբրական մահով նա-
հատակուեցան ձեր հայրերը ու կոր-
սուեցան իսպառ... և անդին ան-
գութ խուժանը ճիւղաղային հրճուան-
քով մը անոնց բնաջնջումի տօնը կը
սարքէր: Եւ դուք, այս ահաւոր տե-
սարաններու սարսափէն դողահար,
խելակորոյս կը վազէիք արիւնաներկ
դաշտերու և անկենդան դիակներու
վրայէն:

Սուկացիք դուք գիտեմ, երբ ձեր
աչքերով տեսաք մայրեր՝ որոնք ի-
րենց հոգեհատորներուն դիակները կը

կրծէին անօթաւթենէ մորակուտած:

Սրտճմլիկ աղաղակներով օղը թըն-
թացուցիք երբ ականատես եղաք
վայրագ թշնամիներուն՝ որոնք իրենց
մահասփիւռ եաթաղաններուն հար-
ուածներէն խողխողուած կիսամեռ
դիակները կը յանձնէին Եփրատի յոր-
դահոս ալիքներուն:

Ահաւոր և սարսափելի օրեր ան-
ցուցիք, որոնց յուզիչ պատմութիւն-
ներուն առաջ քար սրտերն իսկ, կը
դողան, կուլան ու կ'ողբան միան-
գամայն:

Վերջապէս դուք, ո՛վ հէզ որբուկ-
ներ, ազգերու տարեգրութեանց մէջ
չ'արձանագրուած հակամարդկային
անլուր բարբարոսութեանց ենթակայ
ըլլալէ վերջ ձէնկիդ խաներու Շահ-
Աբասներու և Լէնկթիմուրներու ար-
ժանաւոր յաջորդներուն բղքտող ճի-
րաններէն դու՛ք մաղապուր պրծած՝
ալ եկած էք այսօր, ապաստանելու
մեր գիրկը:

Բայց այժմ, այն գարշելի բռնու-
թիւնը որ կարմիր ճիրաններով ձեզ
հոգին բանաարկած էր հինգ տարի-
ներէ ի վեր, ա՛լ գոյութիւն չ'ունի:

Ուրեմն, ամբապնդուեցէք, ո՛վ
վաղուան Հայաստանի հաստատուն
սիւնները, ձեր հայրերուն և մայրերուն
վերջին կամքը մեր ճիտին պարտքն
է, Այո՛, մեռան ու մեռցուցին մեր և
ձեր մտքին ու հոգիին ամէնէն ըն-
տիր ծաղիկները:

Բայց, ո՛չ, մի յուսահատիք, և
վանեցէք ձեր մտքերէն այն անիծեալ
տարիներու վերջիշումները, որոնք
կ'ընդվզեցին ձեր խաղաղած հոգի-
ները: Եւ այն ատեն, հաւատացէ՛ք
որ անոնց աճիւնները հանգիստ ու
խաղաղ պիտի ըլլան իրենց հողա-
կոյտին տակ:

Չարչարանքի տխուր բովերէ
անցնելէ ետքը յաջողած էք իյնալ
մեր գիրկը, պատմելու համար ձեր
գործած կեանքին յոյզերն ու փոթո-
րիկները :

Ախ, ո՞վ պիտի մխիթարէ ասկէց
վերջ ձեզ, ո՞վ պաշտելի էակներ, ո՞վ
պիտի գուրգուրայ ձեր վրայ, դու՛ք
որ ձեր ծնողքներուն մշտատե գո-
րովներուն առարկան էիք դու՛ք
որ մեզմէ աւելի փափուկ և կեանքի
քաղցրութիւններով երջանկացած
էիք և ո՞վ պիտի մխիթարէ ձեր մանուկ
հոգիներուն խոցն ու վիշտը, ո՞վ
պիտի կարենայ մոռցնել ձեր կրած
արհաւիրքներուն վերցիշումները՝
որոնք կը ցնցեն ձեր փոքրիկ ու
մատղայ էութիւնը :

Մե՛նք պիտի գուրգուրանք ձեր
վրայ ո՞վ դուք տարաբախտ խլեակ-
ները մեր ցեղին, մենք հայուհիներս
տողորումած բարոյական և ֆիզիքա-
կան զէնքերով պիտի երջանկացնենք
ձեզ՝ յանուն ձեր դժբախտ հայրե-
րուն՝ որոնք ինկան Ազատու-
թեան ճանապարհին վրայ : Սուրբ
են անոնց յիշատակները և դուք
նուիրական աւանդն էք անոնց :

Քէօթահիա

ԹԱԳՈՒՀԻ ՍԻՄԻԹԵԱՆ

Ա Ռ Ա Կ Ա Ն Ի

Ա Ռ Ա Կ - Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր



Առաջ է պէտքինը,
Իսկ զարդը՝ ետքինը .
Աղուորն ու օգտակար
Չատ տեղեր ունին յար :



Ազուաւին թառը
Դիակն է, եղբա՛յր,
Կը գտնես չարը՝
Իր տեղը յարմար :



Կ'ըսեն թէ, ամէն ջուր
Իր ճամբան կը քալէ .
Դիտցիր թէ կ'երթաս ո՛ւր,
Կոյր վաղքը սրխա՛լ է :



Երբեմն Աստուած կովը կուտայ,
Բայց չուանը մէկտեղ չի տար .
Դուն կրցածներդ ընել փութա՛,
Հարկաւ կ'առնես վարձքդ արդար :



Աղէ՛կ աղջիկ — ուրկէ՞ գիտես,
— Մայրը ըսաւ . Է՛հ, գէշ չէ .
Մարդ մ'ապրանքն իր կը գովէ քեզ,
Դուն աչքդ բա՛ց, լաւն ընտրէ :



Կ'ըսեն, Ան պատին
Ան ծեփը կ'օգտէ .
Ծուռ ձեռքի մատին
Չորս մատնի շատ է :



Աղքատ, քան վատ՝
Ամօթ չէ այդ .
Հարուստ և վատ՝
Կործանի՛ այդ :



Անխելքը շալկեր են
«Վայ ճիւղերս» է ըսեր .
Ո՞վ խելօք, խենդերէն
Աւելին մի՛ սպասեր :



Անխելքին հացը՝ խելօքին փորը,
Անխելքին միշտ հին՝ խելօքին նորը .
Անխելքին՝ տըփոց, խելօքին՝ ապրի՛ս,
Քիչ բան չես սորվիր՝ երբ երկար
ապրիս :

Ա.Ռ.Ա.ԿԱՆՕՍ

ՀԱՆԵԼՈՒԿԻ ԲԱԺԻՆ

ԹԻԻ 3 ՀԱՆԵԼՈՒԿԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

ԿԻԻԴՆՈՍ

ԻՍՈՍ

ԼԱՄԲՐՈՆ

ԻԿՈՆԻՈՆ

ԿՈՌԻԿՈՍ

ԻՐԻՍ

ԱՏԱՆԱ

Այս եօթը պատմական - աշխարհագրական անուններուն առաջին տառերը վերէն վար կը կարդացուին ԿԻԼԻԿԻԱ, որ սիրեցեալ մէկ մասն է մեր անբողջական հայրենիքին :

Լուծեցին. — Օր. Հերանոյշ Գալղճեան (2 անուն տարբեր), Սեպուհ Ա. Աղարեան, Տիւղճէի ազգ. վարժարանէն (2 անուն տարբեր), Օննիկ Ա. Տէր Աբրահամեան, Բանկալթի (2 անուն տարբեր) :



ԹԻԻ 4 ԲԱՌԵՂՇՈՒԱԾԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

ԼՈՒ-ՍԻՆ = ԼՈՒՍԻՆ

Լուծեցին. — Վերթայիմ Թորամանեան (Թորոսեան վարժ. Մօտա), Արշակ Տէմիրճեան (Ամերիկ. վարժ. Կէտիկ Փաշա), Նուպար Զաքարեան (Եէնի Գաբու), Գոհարիկ Տիրատուրեան (Մինասեան վարժ.), փոքրիկն Վահէ Շատուորեան, Ներսէս Վարդանեան (Սկիւտար), Եղուարդ Գուլթալեան (Մինասեան վարժ.), Ստեփան Սիսակեան (Պէրպէրեան վարժ.), Համբարձում Մորճիկեան (Պիլէճիկ), Արփինէ Մարտիկեան (Ազգ. վարժ. Կէտիկ Փաշա), Յակոբ Էսկիճեան (Պալատ) և փոքրիկն Զարիֆեան :

ԲԱՌԵՂՇՈՒԱԾ

ԹԻԻ 5

Վեց տառերով եմ ես մէկ բառ,
Տառերս բաժնեւ երբ հաւասար՝
Հաշմանդամ է մասս առաջին,
Վայր մ'ընդարձակ մասըս վերջին.
Իսկ ամբողջըս, տրդաք, ձեզի
Համար օր մ'է շատ սիրելի :

ԳՐԻԶ-ՔՆԱՐ



ԲԱՌԵՂՇՈՒԱԾ


ԹԻԻ 6

Ես եռավանկ եմ մէկ բառ,
Ունիմ միայն հինգ հատ տառ,
Տառերս երկու տեսակ են,
Երեք հատ մէկ տեսակէն,
Իսկ միւսէն ալ՝ երկու հատ,
Իրար հիւսուած են զատ, զատ :
Նոյն ձայնաւորն իմ երեք
Վանկերուս մէջ կը գտնէք.
Երկու կողմէս նոյնանման
Կը կարդացուիմ ես սակայն :
Յայտնութիւն մըն ալ ընեմ,
Գիտցէ՛ք, յատուկ անուն եմ :
Հայ քաջութեամբ իմ անուն
Հառաւ ականջն ամէնուն.
Եղայ Հայուն պարծանքին
Նոր ուխտավայր թանկագին :
Դեռ ի՞նչ ըսեմ, Հա՛յ մանուկ,
Որ քու խելքովդ սուր, բանուկ,
Ի՞նչ ըլլալըս գտնես դուն,
Փորձէ՛ տրդա՛ս ժիր, արթուն :

ԳՐԻԶ-ՔՆԱՐ



Այս թիւ 5 և 6 բառեղծուածները երկուքը միանգամայն առաջին լուծողը կը ստանայ վեցամսեայ «Առաւօտ» հանդէս :



ՔԱՐՏԻՍ ՄԻԱՅԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ



ՔԱՐՏԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԶԱՐՅՈՒՐԱՆՔԸ ԿԱՐՆՈՅ ՄԷՋ

Գրեց՝ Ժ02Է Բ. Լ.

Թարգմանեց Հ. ՅՈՎՍԷՓ ՏԷՐ-ՄԱՐԳԱՐԵԱՆ
Վիեննական Մխիթարեան

Ան դողդալով մինչեւ դրան
քովը ընկերացաւ, զինքը գրկեց ու
վազքով մը պատուհան ելաւ։ Անու-
շաւան տեսաւ որ մայրը դրացիին
դրան սեմին վրայ կեցաւ վայրկեան
մը, պահակ զինուորին հետ խօսե-
ցաւ և յետոյ ընակարանին մէջ ա-
ներեւոյթ եղաւ։

Տիկին Զանարեան առաջնորդուե-
ցաւ Հուկօ Փօն Կրիպառի սրահը։
Գերմանացի զօրավարը խստօրէն կը
վիճաբանէր Թայֆուր պէյի հետ։

Երիտասարդ կինը լալազին նե-
տեց ինքզինքը թուրք բարձրաստի-
ճան էֆէնտիին ոտքերուն առջեւ։

— Այ... Թայֆուր պէյ, դուն
մեր բարեկամներէն մին, զքեզ որ
իմ ամուսինս փրկեց Ապտիւլ Համի-
տի ձեռքերէն... զքեզ որ մենք
պահեցինք ամիսէ մը մեր տանը
մէջ... Թայֆուր պէյ... հիմայ դուն,
դուն մեր տէրն ես... մտերիմ բա-
րեկամն էմիւր փաշայի...։ Վերա-
դարձուր որդիս... կ'աղաչեմ...
ո՛ւր է ամուսինս, ո՛ւր է զաւակս։
Ի՞նչ ըրիք, Զանարեան էֆէն-
տին...։ Ի՞նչ ըրիք իմ փոքրիկ Պա-
րոյրս... ողորմեցէ՛ք, շնորհ ըրէք
անոնց, կ'աղաչեմ...։

Դեռատի կինը իր ձեռքերը կը
գալարէր և կը հեծկլտար... Փօն
Կրիպառ իր մեծ ու կլոր ակնոցները
դրած կը դիտէր հետաքրքրութեամբ

փոշխելով ակռաները քրտական
փոքրիկ դանակով մը, որ թուզթ
կտրելու կը ծառայէր...։

Թայֆուր պէյ կ'ուրէր իր բա-
րեձեւ գորշ պեխերը, չարամիտ
ժպիտ մը դէմքին վրայ։ Ու իր եր-
կու ձեռքերը մինչեւ քունքերը
բարձրացուցած, ըսաւ ժանտօրէն.

— Տիկին, ժամանակները փոխ-
ուած են։

Յետոյ սկսաւ վիճիլ Փօն Կրի-
պառի հետ, իբրեւ թէ կինը հոն
եղած չըլլար...։

Տիկին Զանարեան մեկնեցաւ ա-
մօթէն չիկնած։

Ան հազիւ դուռը դոցած էր,
երբ պայթում մը լսուեցաւ։

Ժ.

Անուշաւան դեռ կը սպասէր իր
մօրը և չէր տեսեր անոր գալը։
Մինչեւ իրիկուն սպասեց երեսը
դարձուցած միշտ դէպի պատու-
հանը։

Սըրբի, տաճիկ ծառան, որ Փօն
Կրիպառի տանը չորս կողմը կը շրջ-
ջէր, ներս մտնելով, Մատաթեան է-
ֆէնտիին դարհուրելի բան մը ըսաւ,
և վազեմի բարեկամը բոլորովին
չփոթած Անուշաւանը իր բազուկ-
ներուն մէջ առնաւ և անոր ըսաւ
գորովանքով.

— Զաւակս, մայրիկն ա՛լ հիմայ
պիտի չվերադառնայ...

Միայնակ տունը մնալ բոլորովին վտանգաւոր էր փոքրիկ աղջկան մը համար : Անոր համար ուրիշ ապահով տեղ մը երթալ պէտք էր այդ իրիկուն :

Անուշաւան սկսաւ սաստիկ լալ , և աղաղակեց ըսելով թէ անպատճառ անմիջապէս ինքը իր մայրը , հայրը և իր սիրելի փոքրիկ Պարոյրը կ'ուզէ . . . : Յետոյ վիշտով համակուած իր վաղեմի բարեկամին ուսին վրայ քնացաւ :

Սակայն երբ արթնցաւ , ոչ մէկը ճանչցաւ իր շուրջիններէն :

Բազրատ փոքրիկ քիւրտի մը կը նմանէր , սրածայր գլխարկով մը , Սրբուն և իր մայրը երկու աղտոտ մուրացկաններու երեւոյթն ունէին , իսկ Մատաթեան առած էր կերպարանքը թուրք մօլլայի մը , որ երեկոյեան աղօթքը կ'ընէ մինարէին զազաթը , մեծ ճերմակ փաթթոց մը գլխուն վրայ , և լայն քղանցքներով վերարկու մը , որուն մէջ Անուշաւան ամբողջապէս աներեւոյթ կ'ըլլար :

Մութ գիշերին , փոքրիկ խումբը ճամբայ ելաւ հնդկական շարքով մը . փախստականները հրապարակը դարձած միջոցին երեք մասերու բաժնուեցան , աւելի դիւրութեամբ անհետանալու համար : Գրիգոր՝ Սրբունին և իւր մօրը հետ , Սրբին՝ Բազրատին և Աթինաի հետ . . . : Մատաթեան և Անուշաւան , առանձինն մեկնեցան թրքական թաղին փոքրիկ փողոցներուն մէջէն :

ԺԱ.

Մատաթեան խուճապի մատնուած մանուածապատ կ'ընթանար . կը վազէր , երբ ապահով էր թէ մէ-

կը զինքը չի տեսներ , կանգ կ'առնուր , և կը թաքչէր տուներու մէջ , երբ կը վախնար : Հասաւ վերջապէս մեծ մզկիթի մը քովը :

— Նասահէտին հօճա' . . . Նասահէտին հօճա կանչեց Մատաթեան էֆ . ոտքերն ու բռունցքները շքեղ տան մը դրան զարնելով . . . :

Դուռը լայնօրէն բացուեցաւ : Թերուկ մը ամբողջապէս ճերմակ հագուած , մեծ ու երկայն մօրուքով և բարի երեւոյթով մը սէմքին վրայ երեւցաւ :

— Ո՛վ է ան . . . ի՞նչ կ'ուզէք . . .

— Երկու քրիստոնեաներ կուգան պաշտպանութեանդ ապաւինելու համար . . . աղատէ՛ր զմեզ . . . աղատէ՛ր զմեզ . . . աղատէ՛ր քու հին բարեկամդ Մատաթեանը և իմ բարեկամս եղող Զանարեանին աղջիկը :

— Աստուած զձեզ պաշտպանէ . . . հիւրերը նուիրական են , ոչ ոք ձեր մազին պիտի դպչի : Մտէ՛ք պիտի գտնէք հոս ուրիշ դժբաղդներ . . . Անոնք դտան իրապէս Սրբունը և իր մայրը , Բազրատը , ծառաները և մէկ քանի ուրիշ հայեր , որ կը ճանչնային Նասահէտին հօճայի բնակարանը :

ԺԲ.

Նասահէտին հօճա , արդար և բարի մարդ մըն էր , անիկա Կարնոյ ամէնէն յարգուած իսլամ մոլլաներէն մին էր : Իր բնակարանը նուիրական էր քիւրտ կամ թուրք զազաններէն ոչ մէկը պիտի յանդգնէր անցնիլ անոր դրան ոեմքին : Ութ օրուան ջարդերուն միջոցին անիկա կեցած էր իր դրան առջև մտցնելով փախստականները իր բնակարանը , յորդորելով զազանները մեղմութեան և սպառնալով անոնց աստուածային պատիժներ :

Նասահէտտին հօճայ բարեկամա-
ցաւ Անուշաւանի հետ, որովհետեւ
այս պղտիկը խելացի և զուարթ էր :
Անիկա տեղաւորեց միւս փախստա-
կանները իր վստահելի բարեկամներուն
քով թայց բաժնուիլ չ'ուզեց փոքրիկ
աղջիկէն :

ԺԳ.

Սակայն ռուսերը կը մօտենային...
ամէն օր կը լսուէր թնդանօթի ձայ-
նը : Գերմանացի սպաները կը ձգէին
իրենց զինուորները և կը փախչէին
դէպի Տրապիզոն :

Օր մը ճակատամարտը խիստ կա-
տաղի եղաւ, լեռներուն դադաթը և
Բալան-Տէօքէնի վրայէն ուժգին թըն-
դանօթի հարուածներ կը դուռային :

Նասահէտտին հօճան կը յուսահա-
տէր և մղկիթին մէջ կ'աղօթէր...
Անուշաւան կի ծածկէր անկէ իր
ուրախութիւնը, որովհետեւ Ռուսերը
պիտի վերադարձնէին իրեն իր հայ-
րը, մեծ եղբայրը, և մայրը, այն-
պէս չէ...

Ճակատամարտը ահաւելի եղաւ,
Ռուսերը և Թուրքերը մինչև ուսերը
ձիւնին մէջ կը կռուէին : Թուրքերը
քաջ են, սակայն անոնք ըլլայ բաց
դաշտի վրայ, ըլլա՛յ բերդերու մէջ
կը ջարդուէին, իսկ Կովկասի Ռուս
կայսառ լեռնաբնակ զինուորներն ալ
անոնց պէս կը կռուէին : Միթրաեօզի
տարափի մը տակ անոնք յարձակ-
մամբ առին Բալան-Տէօքէն լեռը.
(3500 մէթր) բարձրութեամբ և այդ
բարձունքէն հիւսան պէս իջան քա-
ղաքը, որ անձնատուր եղաւ կատա-
ղի կռիւներէ վերջ...

Հարաւային թաղը բոցերուն մէջ
էր և անիկա Նասահէտտին հօճային
թաղն էր...

Օերուկ մօլլան տեսնելով որ հըր-
դեն ի՞նչ փողոցն էր, բռնեց Անու-
շաւանին ձեռքէն և փախաւ դէպի
օտար հիւպատոսներու թաղը :

Գնդակները կը սլանային ամէն
կողմէ. փողոցի մը դարձքին վրայ
երեցան խաղախներ, որ խուժք մը
փախստականներու ետեւէն նշան
կ'առնէին :

Նասահէտտին հօճա ինքզինքը
կորսուած համարեց. ձիաւորները
այնպիսի կատաղի երեւոյթ մը ու-
նէին, որ կարծես թէ ոչ մէկ բան
կրնար դիմադրել իրենց անցքին վրայ :

Այն ատեն, Անուշաւան ձգելով
ծերունիին ձեռքը, ինկաւ ծնկան-
վրայ փողոցին մէջտեղը, պոռալով
Քրանսերէն.

— Պարոն Ռուսեր, մեղի չարիք
մի՛ ընէք, ես փոքրիկ հայուհի մըն
եմ :

— Ի՞նչ կ'ընես հոս, փոքրիկ :

— Պարոն, պէտք չէ որ զիս
մեռցնէք. Բիւրտերը առին իմ հայ-
րիկս, մայրիկս և մեծ եղբայրս...
Նասահէտտին բարի է ինծի հանդէպ,
անիկա զիս ազատեց... մի՛ մեռ-
ցընէք զանի... մենք ձեր բարե-
կամներն ենք...

Սպան իջաւ ձիէն, պղտիկը ա-
ռաւ իր բազուկներուն մէջ, համ-
բուրեց զանի, և ըսաւ իր երկու
խաղախներուն.

— Պորիս, Լէվէնին համար ըլ-
լայ... ընաւ դէշուլթիւն մը պիտի
չըլլայ անոնց... տարէք զիրենք
նախկին ռուսական հիւպատոսարա-
նը, և ես ալ զիրենք հոն պիտի
դռնեմ, եթէ Աստուած կամենայ...

ԿԱԶՄՈՒԵԼԻՔ

ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՔՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ



Ըստ Պ. Ժան Պէրթրանի, երբ Հայաստան կազմուի, եօթը նահանգներու, Կիլիկիոյ և Հայ Հանրապետութեան միացումով, ան, Հայաստանը, հետեւեալ ազգաբնակչութիւնը պիտի ունենայ.

Չուկէս միլիոն Հայ, Կէս միլիոն Յոյն, Ռուս, Վրացի և Եւրոպացի: Համագումար՝ 3 միլիոն քրիստոնեայ:

Կէս միլիոն՝ Քիւրտ, Չէրքէս, Արար, Պարսիկ, Լազ, 300 հազար Թաթար, 200 հազար Թուրք: Համագումար՝ մէկ միլիոն Իսլամ, 3000 հազար Գըղըլպաշ, Եէղիտի, Զազա, Ֆէլլահ:

Ընդհ. համագումար 4 միլիոն 300 հազար:

ՆԱՄԱԿ ՄԸ

Պատուարժան

Տնօրէն «Առաւօտ»ի

Յարգելի Տէր,

Հաճեցէք ընդունիլ Նիկոմիդիոյ աղջկանց որբանոցի տնօրէնութեան խորին շնորհակալութիւնը և ջերմ դնահատումը ձեր ազնիւ խորհուրդին համար, զոր ի յայտ կը բերէք զրկելով որբանոցին «Առաւօտ» նորահասանու հանդէսը, այնքան շինիչ և օգտակար:

Անտարակոյս ձեր այս նուէրը մզում մը պիտի ըլլայ մեր սիրելի որբուհիներուն մտաւոր զարգացման, որուն այնքան կը կարօտին:

Կը մաղթենք որ անոնք ըլլան

ապագային մեր ազգին արժանի քաղաքացիներ, շնորհիւ բարերարներու քաջալերութեան:

Հաճեցէք, ազնիւ տիար, տնօրէնութեանս յարգանաց հաւաստիքն ընդունիլ:

Ի դիմաց որբանոցի տնօրէնութեան
Վ. Յ. ՄԱՐԳԱՐԵԱՆ Sophie S. Holt

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

«Առաւօտ»

նորահասաներու

հանդէս կը նուիրեն Տիարք Վահրամ Ճանիկեան 2 օրինակ Օրթագիւղի աղջկանց որբանոցին, 2 օրինակ Սամաթիոյ Մասիս նուազախումբին և 1 օրինակ Պալաթու որբանոցին, Մարտիրոս Քէպապճեան 1 օրինակ Ակնայ որբանոցին, Յակոբ Նշանեան 2 օրինակ Ատաբաղարի Հայուհեաց վարժարանին, Յարութիւն Վարդանեան 1 օրինակ Մագրի Գիւղի որբանոցին, Սարգիս Եէրէվէկեան, 1 օրինակ Գալֆայեան որբանոցին, Թօքմաքեան, 1 օրինակ Գատը Գիւղի որբանոցին, Թավչանճեան, 1 օրինակ Եսայեան որբանոցին, Գէորգ Օտապաշեան 1 օրինակ Սերափիոյ որբանոցին, Թորոս Սինանեան 1 օրինակ Պալաթու որբանոցին, Սիմօն Գազանճեան, 1 օրինակ Պալաթու որբանոցին, Տօքթ. Թաշճեան, 1 օրինակ Տիգրանակերտի որբանոցին, Տրդատ Թէրզեան, 1 օրինակ Նարլը Գաբուի որբանոցին, Խորէն Օտապաշեան, 1 օրինակ Ատանայի որբանոցին, Յակոբ Տիարպէքիլեան, 1 օրինակ Պրուսայի որբանոցին:

